ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» մայիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի համաքաղաքացիներ, սիրով շնորհավորում եմ մայիսի մեկի՝ աշխատավորի օրվա առթիվ: Այսօր արարող ու աշխատող մարդու տոնն է: Այս տոնն աշխատանքն ու աշխատավորին գնահատելու համընդհանուր իրադարձություն է, ևս մի հարմար առիթ՝ շնորհակալ լինելու այն մարդկանց, ովքեր իրենց աշխատանքով նպաստում են մեր համայնքի զարգացմանը: Մեր ամենօրյա աշխատանքը միտված է համայնքային խնդիրների արդյունավետ ու արմատական լուծմանը:

Ցանկանում եմ՝ այսուհետ ևս գործենք միասնական՝ հանուն մեր սիրելի համայնքի զարգացման, հանուն մեր սերունդների անհոգ ու ապահով ապագայի: Կրկին շնորհավորելով աշխատանքի օրվա առթիվ՝ մաղթում եմ բոլորիս խաղաղ և ստեղծագործ աշխատանք՝ ի շահ մեր երկրի կայուն զարգացման և առաջընթացի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ